

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԻՐԱՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Գ. Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1981 թ. երրորդ համարում զետեղված Լ. Շ. Հովհաննիսյանի «Իրանական փոխառություն համարվող մի քանի բառերի շուրջը» հոդվածը, ցավոք, պարունակում է որոշ սխալներ, որոնց առկայությունը նման հարցերին նվիրված հոգվածում տարակուսանքի տեղիք է տալիս:

Գիտության մեջ վաղուց հաստատված և նույնիսկ դոգմա դարձած ճշմարտությունների վերանայումը, ինչ խոսք, կարևոր և անհրաժեշտ աշխատանք է, որը համապատասխան մեթոդի և գիտական պատշաճ մակարդակի ապահովման դեպքում կարող է հանգեցնել նոր եղրակացությունների՝ հաջրատացնելով գիտությունը նորանոր փաստերով:

Հոդվածի հեղինակը նպատակ է դրել անդրադառնալ մի քանի բառերի ստուգաբանությանը, «որոնց իրանական ծագումը հաստատող կամ փոխառություն դիտելու փաստարկները բավարար չեն կամ խիստ առարկելի են» (էջ 253): Այդ շարքում մասնավորապես մեծ տեղ է հատկացվում հայերեն «ավան» բառին, որը, ինչպես հայտնի է, իրանական փոխառություն է: Այն անմիջապես մեզ է անցել պահլավերեն avahan-ից, որն իր հերթին հանգում է հին պարսկերեն avahana—«բնակավայր, գյուղ» բառին¹: Հեղինակը կարծում է, թե avahan-ը պահլավերենում ավանդված չէ, այնինչ սույն բառը այդ լեզվում գոյություն ունի և արտացոլված է համապատասխան պահլավագիտական ձեռնարկներում՝ 'wb hn', որն, ի միջի այլոց, կարող է լինել նաև այսպես կոչված պատմական գրության օրինակ. այդ դեպքում կարելի կլիներ նաև անգամ avan ընթերցումը²: Այս կապակցությամբ -aha->-a հնչյունափոխությունը կատարված կարելի է համարել հենց մայր լեզուներում, չնայած որ դա սկզբունքային հարց չէ, քանզի նման հնչյունական անցումը, հակառակ հոդվածագրի անհիմն պնդման (էջ 254), շատ պարզ և բնական երևույթ է պատմական հնչյունաբանության մեջ:

Եվ այսպես, ժխտելով avahana > աւան կապը, հոդվածագիրը, հետևելով Գ. Ղափանցյանին, մեր բառը կապում է ուրարտերեն eban-ի հետ՝ գտնելով, որ «ուրարտերեն b հայերենում տալիս է ռ, իսկ e կարող է տալ և կամ ա» (էջ 254)³: Այնուհետև նա, ավելի հեռուն գնալով, նույն eban-ն հա-

¹ Sk'w W. B. Henning. A Farewell to the Khagan of the Aq-Aqatāran.— „Bulletin of the School of Oriental and African Studies“, 14, 1952, p. 520; W. Brandenstein, M. Mayrhofer. Handbuch des Altpersischen. Wiesbaden, 1964, S. 109.

² D. N. Mackenzie. A concise Pahlavi dictionary. London, 1971, p. 13.

³ Որոշ հեղինակներ հենց այդպես էլ ընթերցում են այդ բառը āvān. տե՛ս, օրինակ՝ W. B. Henning, աշխ. էջ 520:

⁴ Մի կողմ թողնելով հնչյունական կողմը, պետք է նշել, որ նման ստուգաբանությունը նախ և առաջ խոտելի է հենց իմաստի տեսանկյունից. ուրարտ. eban, ըստ նորագույն հետազոտությունների, նշանակում է երկիր՝ страна և ոչ թե գյուղ կամ ավան: Sk'w օրինակ՝

մարում է նաև հ.պ. avahana-ի մայր ձևը, քանզի ըստ նրա՝ «բառի իրանական ծագումը հաստատող եղած փաստարկները համոզիչ չեն» (էջ 254) և բերում է փաստեր, որոնց մեջ հիմնական տեղը գրավում է այն դրույթը, որ իբրեք եթե ավան, գյուղ և նման հասկացություններ արտահայտող բառերը օգտագործվում են օտար տեղանունների համար, ուրեմն՝ դրանք օտար ծագում ունեն։ Պետք է մասնավորապես նշել, որ մեզ հետաքրքրող բառը հ.պ. սեպագիր տեքստերում հանդիպում է ընդամենը երկու անգամ և բնականաբար երկու օրինակի հիման վրա չի կարելի նման եզրակացության գալ, մանավանդ որ՝ դատելով հոգվածից հեղինակը ճիշտ չի հասկացել հին պարսկերեն տեքստը և թերևս Ռ. Քենթի համապատասխան անգլերեն թարգմանությունը։ Դա երևում է նրանից, որ հոգվածում բերվում է այլ կոնտեքստ կամ էլ՝ կիսատ նախադասություն, ինչպես նաև՝ տեքստը միանգամայն սխալ է վերլուծվում։ Խոսելով այն մասին, որ երկու անգամ էլ avahana- բառը հանդիպում է օտար տեղանունների հետ, հոգվածագիրը շարունակում է. «Մեկ դեպքում այն Ujaly ավանն է (հոգվածում u-ն կարճ է—Գ. Ա.)՝ avahanam—Ujaly, որը գտնվում է էլամի տարածքում» (էջ 255)։ Բերենք լրիվ նախադասությունը և ցույց տանք թյուրիմացությունը. stuna adaganiya tya idā karta Abiraduš nama avahanam Ujaly (DSf, 45—46) «Քարե սյունները, որոնք կառուցված են այստեղ, [մի] գյուղում Աբիրադուս անվամբ, էլամում»։ avahanam (տեղի հայցական հոլով) վերաբերում է ոչ թե Ujaly, ինչպես կարծում է հոգվածագիրը, այլ Abiradu-ին, իսկ Ujaly-ն թե ավան է, այլ տեղական հոլովի ձևն է Uja- բառի, որը նշանակում է 'էլամ'։ Անուհետև հոգվածագիրը բերում է մյուս օրինակը՝ «... tā patiš Dādarsim hamaranam cartanay Zūzahya nama avahanam», որը չի համապատասխանում տողատակում պրոֆ. Գ. Նալբանդյանի տված հայերեն թարգմանությանը՝ «...Արմինիայի մեջ Զուզա անունով մի ավան կա»։ Նախ՝ ի՞նչ է նշանակում նախադասության սկզբի ta-ն (հոգվածում կարճ a է—Գ. Ա.)։ Դա նախորդ՝ paraita բառի վերջավորությունն է, որը հեղինակը առանձին բառ է համարել. իսկ ընդհանրապես նախադասության այդ մասը՝ մինչև Zūzahya, գործին չի վերաբերում և դրա առկայությունը ոչ մի կերպ չի պատճառաբանված։ Դա այլ նախադասություն է՝ հետևյալ թարգմանությամբ «...[ապստամբները] եկան Դադարշի դեմ՝ պատերազմելու»։ Մեզ անհրաժեշտ կոնտեքստն է. Zūzahya nāma avahanam Arminiyaly. ինչպես տեսնում ենք, այստեղ բաց է թողնված Arminiyaly բառը (տեղական հոլովով՝ «Հայաստանում»), որը առկա է պրոֆ. Գ. Նալբանդյանի թարգմանություն մեջ։

2. պ. avahana- բառը հանգում է հնդ. իր. *vas- (իրան. *vahi-) «բնակվել» արմատին՝ ձ- բայական նախածանցով։ Այդ արմատը իր հերթին հանդում է հ.ե. *ues-ին⁵։

Իր հոգվածում հեղինակը հատուկ տեղ է տալիս նաև իշխել (իշխան) և տաշտակ բառերին։ Առաջինը նա, ի տարբերություն հաստատված կարծիքի, հետևելով մի քանի այլ գիտնականների հանգեցնում է կասկածելի ընթերցում ունեցող խեթերեն išha-ին։ Այս դեպքում արդեն հաշվի չեն առնվում ընդհանուր հայ-խեթական հարաբերությունները և այն, որ հայերի նախնիների՝ խեթերի հետ հարաբերությունները շատ անգամ այնքան պարզ չեն, որքան հայ-իրանական դարավոր հարաբերությունները և փոխադրեցությունները։ Հեղինակը մոռացության է տալիս նաև այն կարևոր փաստը, որ իշխան բառը մտնում է հայերենի՝ իրանական ծագում ունեցող հասարակական-բա-

И. И. Мещанинов. Аннотированный словарь урартского языка. Л., 1978, с. 103;

Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 393.

⁵ Šk'w J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. Bern, 1959, S. 1170.

դաքական տերմինների բառախմբի մեջ և այդ համակարգից կտրելով դիտել այն որպես խեթական փոխառություն լուր համահունչունության հիման վրա՝ չի կարելի: Մանավանդ որ հին ստուգաբանությունը մերժող որևէ լուրջ փաստարկ հեղինակի կողմից չի բերվում:

Տաշակ բառը հոգվածագիրը համարում է կազմված իրանական տաշա և հայերեն փոքրացուցիչ -ակ մասնիկից, այսինքն՝ հեղինակի նպատակն է վերանայել -ակ մասնիկի ծագումը: Այստեղ էլ նա առանց փաստարկի, զուտ ընդհանուր հայտարարությամբ ձգտում է ժխտել պահլավերեն չավանդված *taštak բառի գոյությունը, որը վերականգնվում է ինչպես ժամանակակից պարսկերեն t'āšt'ak՝ «թաս, աման» բառի, այնպես էլ իրանական լեզուների զարգացման ընդհանուր օրինաչափությունների և բառակազմական օրենքների հիման վրա: Հիշեցնենք հեղինակին հետևյալը. հին իր. *tas- «տաշել, կերտել» արմատը համասարապես կարող է տալ *tašta- (անց. դերբայ), որը տվել է tašt, հլ. տաշտ և -ka-ով՝ *taštaka > *taštak > հլ. տաշտակ: Արդյոք ավելի նպատակահարմար և հավանական չէ՞ հայերեն տաշտակը լրիվ համարել իրանական փոխառություն, քան ենթադրել, որ -ակը բնիկ մասնիկ է. վերջին դեպքը ապացուցել շատ դժվար է, համարյա անհնար, քանի որ հակառակ դեպքում կարելի է ենթադրել սրային հայերեն և պարսկերեն ձեվովների նոստամիանցիա՝ երկուսի համանունության պատճառով:

Բացի վերոհիշյալ բառերից հեղինակը քննարկում է մի քանի այլ բառեր, մասնավորապես այնպիսիք, որոնք հենց հայերեն տեքստում համարվում են պարսկերեն, այլ վերաբերում են մեջբերումներ, երբեմն նույնիսկ հայերեն թագավորության: Հեղինակը միանգամայն իրավացի է, որ նման բառերը չի կարելի համարել պարսկերեն փոխառություն. այդ դեպքում լավ կլինեք, որ նա հենց այդ ուղղությամբ էլ աշխատեք՝ հավաքեք այդպիսի փաստեր և ձգտեք գիտականորեն դասակարգել դրանք:

Պետք է նշել, որ հոգվածում բավական թվով նաև մանր անճշտություններ կան. օրինակ, ի՞նչ ասել է «աքեմենյան, պահլավական, սասանյան շրջանից բառային փոխառություններ» (էջ 253). չէ՞ որ այդ շարքում առաջինը և վերջինը թագավորական հարստություններ են, իսկ մեջտեղինը՝ լեռնի անուն:

Հուսանք, որ հեղինակի աշխատանքներն այսուհետև զերծ կլինեն նման թերություններից:

К ВОПРОСУ О НЕКОТОРЫХ ИРАНСКИХ ЗАИМСТВОВАНИЯХ В АРМЯНСКОМ

Г. С. АСАТЯН

(Резюме)

В статье «О некоторых армянских словах, считающихся иранскими заимствованиями» Л. Ш. Аванесяна («Историко-филологический журнал», 1981, № 3) делается попытка пересмотра этимологии некоторых армянских слов, иранское происхождение которых давно установлено и не вызывает сомнений. Автор считает, например (вслед за Г. Капанцяном), что слово *տաշտ* восходит к урартскому *ēaṣi*, а не к ср.-перс. *āvaṣan* < др.-перс. *āvaṣana*. Недостаточно строгое отношение к лингвистическим фактам далее приводит автора к мысли, что др.-перс. *āvaṣana* - «поселок, деревня» в свою очередь также якобы восходит к урарт. *ēaṣi* «страна». Для подкрепления этого тезиса автор приводит контексты из Бехистунской надписи (DB 2.33, DSf 46), где слово *a. aṣana* сочетается с названиями поселений, находящихся вне пределов Ирана. Это и дает повод рассматривать слово как неиранское по происхождению. Несостоятельность такого утверждения очевидна, тем более что, судя по анализу приведенных отрывков, автор слабо разбирается в древнеперсидском тексте. Слово *āvaṣana* - индоевропейского происхождения. Что касается других слов, рассмотренных в указанной статье, то соображения автора и в этих случаях не выдерживают критики.